

## **Փարաքար գյուղի հիմնական դպրոցի շենքի նորովի օգտագործման առաջարկություն**

### **1. Հանրօգուտ ծրագիր.**

Նախատեսվում է նախկին դպրոցի շենքում հիմնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների կենտրոն հետևյալ բաժիններով.

- ա. համակարգչային սարքավորումների հավաքման արտադրամաս /10 աշխատողով/ ,
  - բ. համակարգչային և բջջային կապի սարքավորումների վերանորոգման արհեստանոց /5 աշխ./,
  - գ. համակարգչային ծրագրերի մշակման գործակալություն /15 աշխատող/,
  - դ. վերը նշված ուղղություններով մասնագետների պատրաստման և վերաորակավորման ուսումնական կենտրոն /10 ուսուցիչ-վարպետ և տարեկան մինչև 100 սովորող/:
- Կենտրոնում զբաղված կլինեն նաև 5 ադմինիստրատիվ և 5 օժանդակ-տնտեսական աշխատող:

### **2. Ծրագրից օգուտները.**

Նախատեսվում է, որ ծրագրի շրջանակներում պահանջարկ վայելող մասնագիտացում կստանան պատանիներ և աղջիկներ.

2018 թվականին - 20 հոգի,

2019 թվականին - 60 հոգի,

2020 թվականին - 100 հոգի,

ինչպես նաև տեղում աշխատանքով կապահովվեն համայնքի Փարաքար և Թաիրով գյուղերից, ինչպես նաև հարակից համայնքներից.

2018 թվականին - 10 հոգի,

2019 թվականին - 20 հոգի,

2020 թվականին - 50 հոգի:

### **3. Բարեգործության ընդհանուր ծավալը.**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարեգործություն հետևյալ ծավալներով.

2018 թվականին - 1 մլն դրամ,

2019 թվականին - 2 մլն դրամ,

2020 թվականին - 3 մլն դրամ:

### **4. Ներդրումների ծավալը.**

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի կատարել հետևյալ ներդրումները ըստ ժամանակացույցի.

2018 թվականին - 25 մլն դրամ,

2019 թվականին - 15 մլն դրամ,

2020 թվականին - 10 մլն դրամ:

Հանրօգուտ ծրագիրը ամբողջությամբ գործարկելու համար կպահանջվի 3 տարի: Ծրագիրը կգործի ամբողջ ծավալով 2021 թվականից, նախնական հաշվարկով մինչև 2030 թվականը:

### **5. Ակնկալվող արդյունքները.**

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- աշխատանքով կապահովվեն համայնքի 50 բնակիչներ,
- օրեցօր ավելի մեծ պահանջարկ վայելող մասնագիտությունների գծով

հմտություններ և մասնագիտական որակավորում ձեռք կբերեն տարեկան մինչև 100 երիտասարդներ, ինչը նրանց հնարավորություն կտա լինել մրցունակ և ունենալ բարձր վարձատրվող աշխատանք,

- նախատեսվող ինֆորմացիոն տեխնոլոգիաների կենտրոնը որակյալ ծրագրային և տեխնիկական սպասարկում Փարաքարի և շրջակա համայնքների պետական, համայնքային և մասնավոր սեկտորի հաստատությունների համար:

## **6. Նվիրաբերվող գույքի արժեքը.**

Նվիրաբերվող գույքը բաղկացած է հողամասից /0.43 հա/ և շինություններից.

երկհարկանի դպրոցական մասնաշենք՝ քարե պատերով և փայտե միջհարկային ծածկերով, կառուցված 1930 թվականին, ընդհանուր մակերեսը՝ 968.2 քմ,

չգործող կաթսայատուն՝ մեկ հարկանի, քարե պատերով և երկաթբետոնե ծածկով, առանց տանիքի, մակերեսը 87.8 քմ,

պահեստ՝ մեկ հարկանի, քարե պատերով, մակերեսը՝ 20.2 քմ, և բակային զուգարան՝ 4.0 քմ:

Շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 1080 քմ:

Հողամասի կադաստրային արժեքը Փարաքարում 1 քմ-ի համար կազմում է 4524 դրամ, 4300 քմ հողամասի արժեքը կկազմի 19 մլն 453 հազար դրամ:

Շինությունների շուկայական արժեքը, հաշվի առնելով դրանց մաշվածությունը, 1 քմ-ի համար մոտ 20 000 դրամի հաշվարկով, կկազմի 21 մլն 600 հազ դրամ:

Անշարժ գույքի ընդհանուր արժեքը /հողը և շինությունները միասին/ կազմում է 41 մլն 53 հազ. դրամ:

Փարաքար համայնքի ղեկավար՝

Ս. Վարդանյան